



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84

5-64

2016

4. 7 n (p u)

1855

2011

50

№ 20 03




Կհ. 6

15

ՔՐՈՅԵԿԸ ՊԵՏՐՈՒԹԻՒՆ

ԿՆԱՐԻՊԱՆ ԵՇԱՊԵՏ

4



ԹԱՐԳՄԱՆԵԼՑ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԻ

Մ Ա Պ Ա Ք Ք Ա Տ Ք Դ Ա Տ

Ը ՄԲԵՆԵԸ



Տ Պ Ե Ը Լ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՈՒԶՈՒՆ ԶԱՐԴԸՆ

1855 =

84

6-64



467



1877
39

9

84

6-64

4v

Printed in Turkey

Ա Ջ Գ

Handwritten note in the top right corner.

Այս անուստիան պատասխանին Ռարգճա-
նա-Նի-նը, որն որ ընտիր Բարոյանիան պատ-
ճա-Նի-ննէրէն Տէնն է, իր հաստիակից ու-
սու-ճուսակը պատասխանէրո-ն ուր Բարնուս-
խանն ջանքով իր գրգռէ, և որոն պի-
տանու-Նի-նը ստիւն Տէն ընՆիւրչուղ անշամք
կրնայ վիայել :

Handwritten signature or name.

1875

Handwritten text next to the date.



بقراء ولد سرد
بقراء ولد سرد

Dilbran . . .

1893

[Faint, illegible handwriting, possibly bleed-through from the reverse side of the page]

Գ. Լ. ԵԹ Ի Խ Ը.

« Չեր զաւակը հաւատարիմ
մարդոց յանձնեցեք, որովհե-
տեւ անիկայ հրեշտակաց ար-
դար ջանքն է ու ։



Ֆրեաներիկոս ԼչանՖէլ կոմսն ու
իր առարիւնի կողակեցը Նաէլայիա, որք
Ժ.Օ գարունն սկիզբները մեծ անտա-
ռի մը սահմանագլուխը սարածուած
գեղեցիկ տան մը մէջ մէկ սեղ կը բը-
նակէին, ազուոր տղայ մը ունեցան՝ ու
րուն անունը դրին Հենրիկոս, և խան-
դակաթ սիրով կը գգուէին. ուրախ և
հանգիստ իրենց հին բերդին մէջ կեան-
քերնին անցուցած սանննին՝ քաղաքին
մէջ պատերազմի ճայն մը ելաւ. Ֆրե-
աներիկոս կոմսը պարտաւ որեցաւ գէնքե-
րը առնել հայրենիքը պաշտպանելու հա-
մար, երբ իւր որդին ընտանեաց տկան-
ջին այնչափ տխուր թելի անունը գեւ չէր
կրնար թոթովել :

Իւր կինը խղճմտանքով և բարի ազ-
նուականու թիւններով յարգուած՝ շա-

րաւնասկ բերդը կը բնակէր, կոմսին հե-
 ուացման ժամանակը, իրեն միմիայն մը-
 խիթարանք Հենրիկոս որդւոյն հետ. և
 այս առանձնութեան մէջ իւր պարա-
 պութիւնը զմայլեցընելու համար ինքը
 աղուն դաստիարակութեանը ազնիւ
 կերպ մը հաստատեց, սպասելով իւր
 սիրելի ընկերոջը՝ կոմսին գալու վայր-
 կեանք.

«Որ մը իշխանու հին այգիին մէջ
 պարտելէն բերդը դառնալով, Հենրի-
 կոսը գիրկը առած սրահին պատուհա-
 նին առաջքը նստած էր. դայեակը՝
 Մարգարիտա քանի մը ծաղիկ ցըցուց
 աղուն որ դբօմնու. այն սը հրեշտակի
 պէս ազնուաբարոյ՝ իւր վարդիկ ձեռ-
 քերը երկնքընելով մէյմը մերը մէյմը
 դայեակին երեսն ՚ի վեր խնդալով բըռ-
 նելու կ'աշխատէր:

Ատելայիտ աւեմնելով իւր աղան այն-
 չափ սիրուէն, վասիկութեանք զանի
 կուրծքին դնելով սխմեց իւր ուրա-
 խութեանը մասնակից ընելով. երբ կամ
 սին ծեր ծառաներէն մէկը սրահը մը ա-
 նելով իմացուց անոր, որ իւր այրը վե-
 րաւորուած էր պատերազմի մը վա-
 ռաւոր յաղթութեանը մէջ, և որ իւր

փիճակին փրայ անհանգիստ կը փափա-
 քէր գտնէ հեղ մըն ալ տեսնել սիրելի
 ընկերը, անոր բաղուկներուն մէջ հոգին
 աւանդելու համար թէ որ Աստուած
 բժշկու թիւն չի տար:

Այս ցաւալի լուրին Ատէլայիսի վը-
 րային ապաւորու թիւն ընելը չի պատ-
 մուիր. շուարած և խելքը գլխէն գա-
 ցած գրեթէ աղան գիրկէն կը ձգէր,
 և կսկիծէն բոլոր առնը իւր ձայնովը
 կը լեցնէր: Այն ատեն ծառայն կոմ-
 սուհին հանդարտեցունելու համար ը-
 սաւ, որ ինչուան հիմա ամենեւին յու-
 սահասու թեան բան մը չի կար, և թէ
 կոմը իւր վերքերէն կրնայ բժշկուիլ.
 Իսկ պէտք է արատրալ անոր համեւելու
 համար, թէպէտ և ինքը ամենեւին
 չէր սարակուսեր որ կոմսուհւոյն ներ-
 կայու թիւնը իր ամուսնոյն փրայ յաջող
 արդիւնք մը բերէ:

Ատէլայիս իսկոյն կը պատրաստուի
 քանի մը հաղուսա և քիչ մը ստակ հե-
 աղ առնելով իւր գնացքը շուտցրնե-
 լու համար՝ ետքը որդին գիրկը առած
 արցունքէն թրջելով կ'ըսէ. խեղճ ար-
 ղայ, դեռ չես գիտեր դժբաղդ մորդ
 այսքան արցունք թափելուն պատճա-

ոք. ուստի քու հայրդ առանց տեսնե-
 լու կորսնցունելուդ տարաբաղդու-
 թիւնը պիտի ունենաս, ինձի ո՛րչափ
 ցաւալի է զքեզ ձգել. ո՛հ ո՛րչափ կ'ու-
 ղէի զքեզ հետս տանիլ, իսկ անկարելի
 է, ճանապարհորդութեան երկայն և
 տաղտկալի ըլլալուն համար. մնաս բա-
 րով իմ պզտիկ բարեկամս, և դորովա-
 լից համբոյրներով ըսաւ. կ'երթամ ըն-
 կերս գանելու, Մատուած տայ որ շուտ
 հասնիմ զանի մխիթարելու և առողջա-
 ցընելու համար. Դուն ալ Մարգարի-
 տա, ըսաւ աղջկանը, երկրիս վրայ այրէս
 ետքը բոլոր ունեցած բարիքներս քեզի
 կը յանձնեմ. աղէկ նայէ առ տղուն, և
 եվել եվելօք քնացած ատենը մինակ մի՛
 ձգեր ես հոս եղածի պէս հոգ տար վը-
 րան. և երբ օգը գեղեցիկ ըլլայ՝ անոր
 հետ պարտէզը իջի առատուանց քաղցր
 հովերը շնչելու համար. Երբեմն պէտք
 է պզտիկ երգեր կանչել զանի ուրախա-
 ցընելու, հետք խօսիլ լեզուն բանալու
 համար, անոր ծաղիկներ և խաղաղիք-
 ներ ցուցընել, ետ պահելու այն ամեն
 բանէն որ պիտի կրնան վիրաւորել. ա-
 մենէն եվել պէտք է թողուլ իրեն վը-
 նասակար ինչ և իցէ բան մը բերանը

տանել. Մտածէ որ այս տարիքին փափ-
 կաւ թիւնը, որ չի կրնար իրեն պէտք ե-
 դածը հասկըցընել մեծերուն կողմէն
 շատ համբերու թիւն, ցաւակցու թիւն
 և կամքը կատարել կը պահանջէ. ուս-
 տի իմ խեղճ Հենրիկոսիս պահապան
 հրեշտակն եղիւր. Եթէ քեզի յանձնած
 գործերս հաւատարմու թեամբ կատա-
 րելու ըլլաս, առատաբար պիտի վար-
 ձատրիս. Նաեւ կը ծանուցանեմ քեզի
 թէ սենեկապան կնկանը, բերդին վե-
 րակացուին և բոլոր մեր ծառայու թեան
 մէջ գանուող մարդոց պիտի ապսպրեմ
 զքեզ նկատելու. Ուստի կը խոստա-
 նաս ինձի հրամաններս հաւատարմու
 թեամբ կատարելու. այն ատենը միայն
 հանգիստ պիտի երթամ. ո՛հ որչափ եր-
 կայն պիտի երեւայ հոսկէց հետու ան-
 ցուցած ժամանակս.

Մարգարիտան ամեն բան իւր սիր-
 րու հւոյն խոստացաւ, ետքը Մաէլայիտ
 տանը այլեւայլ սպասաւ որնեքը բերել
 տուաւ. բերդին հոգը յանձնեց անոնց,
 և խաչելու թեան պատկերին առջևը
 կնկարով ջերմեռանդ աղօթք մը ընե-
 լով տղան օրհնեց և լալով իւր մար-
 գոցմով զուրս ելաւ կատքը մտաւ սիր-

ար սխմուած և սաստիկ անհանգիստ
ցուրտ գիշեր մը ճամբայ ելլելով .
Մթնոլորտը խիտ ամպերով պատած էր
և երբեմն երբեմն կ'անձրեւէր . որով
ճամբաները սահուն էին , սակայն կառ-
քը արագ ու թեւակք յառաջ կ'երթար ,
որովհետեւ աստուք եղած ձիերէն ամե-
նէն աղէկները լծած էին .

Այն ատեն Ստեղայիտ երկիւղի և
յուսոյ մէջ պաշարուած իւր ընկերացի-
քով հասնելու վայրկեանները կը համ-
րէր . և գրեթէ կը ցանկար թեւեր ու
նենաղ անոր բազուկներուն մէջ թռչե-
լու և զանի հաղալու համար .

ԳՂՈՒԹ Բ.

Անհնազանդութիւնը սասկառի գոբադդու-
թիւն մը կը բերէ :

Փոքրիկ . Հ երիտասին գայեակը մեր-
ձակայ գիւղերէն պղտիկ գեղջուկ աղ-
ջիկ մըն էր . իւր ծնողքը նոր կորսն-
ցունելով ամենեւին օգնական մը չու-
ներ . Լշանֆելտի կամար անոր գթալով

քովը առած էր • աւստի բարեպաշտ և
հեղ բնութիւն մը ունենալով՝ կը կար-
ծէր որ իւր որդւոյն պահպանութիւ-
նը կրնար անոր յանձնել •

Մարգարիտա իւր տեարցը վրայ շատ
սէր ունենալով առջի բերանը կոմսուհւ-
ւոյն պատուէրները ճշդութեամբ կա-
տարելով տղուն վրայ հոգ տանելով կը
հսկէր • շատ անգամ փափուկ մարգա-
րեանին վրայ անոր հետ կը խաղար , և
ամենեւին աչքը անոր վրայէն չէր վեր-
ցունէր •

Օր մը Հենրիկոսին օրօրոցին քով
նստած գուլպա կը հիւսէր , տղան հան-
գիստ կը քնանար • Մարգարիտ պզտիկ
օրօրոցը վարդերով զարդարած էր՝ տը-
ղուն ուրախալի ապշութիւն մը պատ-
ճառելու համար , որն որ ձերմակ կա-
զով մը ծածկուած էր • երբեմն երբեմն
սիրելի սանին վրայ ուրախութեան նայ-
ուածքով մը կը նայէր • որուն կարմրա-
փայլ այտերը ծաղիկներուն պայծառու-
թենէն վար չէին մնար • և կազին վրայ
եկող ճանճրացուցիչ ճանճերը կը վը-
ռընտէր • Այնչափ զմայլած էր տղուն
մատղաշ դէմքը տեսնելով , որ առաջ-
աւրնէ կ'ուրախանար կոմսուհւոյն՝ իւր

դառն ճանապարհ որդու թե՛նէն դարձած
 ասե՛նը զանի քաջառողջ ներկայացրնե-
 լուն համար : Մասնկ զբաղած ասե՛նը
 սրահէն աղաղակ մը լսեց . խուճք մը ե-
 րածիչսններ բերդը եկած կը նուազե-
 ին . իսկոյն ծառաներուն մէջ մեծ ա-
 ղաղակ մը վիթխալ . որոնք բաւոր գոր-
 ծերնիս ձգած գեղեցիկ երգերը մտիկ
 ընելու կը ժողովրդէին . բանը կը մեծնայ,
 նուազածուները սատրիս սենեակ մը
 տանելով կ'սկըսին պարու . անոնցմէ ա-
 մենէն զուարճասէրը կ'ըսէ , պէտք է որ
 մեր ախրոջն հոս չեղած ասե՛նը քիչ մը
 զբօսնունք և այս առիթէն օգուտ մը
 քաղենք , կարելի է որ այսպէս ուրա-
 խութիւն մը հեղ մ'ալ չենք ունենար :

Մարգարիտան դիւրութեամբ հաս-
 կըցաւ բանին ինչ ըլլալը , շատ կը ցան-
 կար պարողներուն հետ խառնուիլ ,
 բայց կոմսուհւոյն պատուէրները զանի
 Հենրիկոսին օրօրոցին քով արգիլեցին
 որ իւր աշխատանքը շարունակելով այն
 հրապուրանացը յաղթեց . Այն ասե՛ն
 սղուն քնացած սենեակին դուռը բաց-
 ուեցաւ և պարտիզպանին աղան յիտր-
 քը ներս մտնելով ըսաւ . Մարգարիտա-
 յին , շատ միամիտ ես . որ երբ ամենքը

Կ'գրօսնաւն՝ դուն տղուն քով կը կե-
 նաս, իջիր և եկուր մեզի հետ պարե-
 լու. չես գիտեր նուագարանը որչափ
 գեղեցիկ բան է. մէկը փող կը չալէ իւր
 պզտիկ տղան ալ սրինգ՝ մէկը ուրիշ նը-
 ւագարան մը, և կնիկ մ'ալ անոնց հետ
 թմբուկ կը զարնէ. այս առիթը ձեռքէ
 մի՛ ձգեր և եկու քիչ մը պարէ. Սօխ-
 կայ անկարելի է, ըսաւ աղջիկը. գիտես
 որ տիկինը ինձի ապսարհեց ամենեւին
 այս տղան մինակ չի ձգել. չեմ ուզեր
 տիրուհւոյս հրամանին դէմ կենալ.

— Ահա գեղեցիկ պատճառ մը,
 խենթ ես Մարգարիտա. Հենրիկօսը կը
 քնանայ, քովն եղեր ես չես եղեր վը-
 նաս չունի. ուստի եկու, ուզած ա-
 տենդ կրնաս վեր ելլել.

— Իայց թէ որ իմացուի կոմսու-
 հին զիս պիտի յանդիմանէ.

— Ի՞նչ կը կարծես մեզի, մե՛ք քե-
 զի պիտի մասնե՞նք.

Մարգարիտան ալ չի դիմացաւ, և
 տիրուհւոյն հրամանը միտքէ հանելով
 այս հրաւերը մտիկ ըրաւ. հեշտու-
 թեան սէրը պարտաւորութեանը յաղ-
 թեց, և իջնալով գնաց խաղցողներուն
 հետ խառնուեցաւ. հասիւ թէ քանի

մը քայլ առելի էր • խիղճը լինիլը չարաւ
չար խայթելով իւր արիւոջը պատուէր
ներքը ոտքի տակ առնելուն համար •
սիրտը սաստիկ խռոված դրեթէ չի կրու
ցաւ դիմանալ կրած դժուարութեա
նը • Օտուաները որ անոր անհանգրսւ
տութիւնը կը դիտէին • զանի հանդարտ
տեցունել ուղեցին • քիչ մըն ալ հոն
կենալէն ետքը աղուն սենեակը գնաց
անսնելու որ ի՞նչ կ'ընէր •

Իսկ ո՛վ Աստուած ի՞նչ սուկումն •
տղան աներեւոյթ էր եղած՝ օրօրոցը
պարսպ էր • և ամենեւին նշան մը չի
գտաւ աղուն ինչ ըլլալը գիտնալու հա
մար • Վախէն լեզուն կապուած • սկը
սաւ սենեակին մէջը փնտուել • բայց բան
մը չի կրցաւ գտնել • յարկին մէջ ամե
նեւին բան մը փոխուած չէր • Առջի
բերանը կարծեց որ տանը աղախիննե
րէն մէկը գաղտուկ վեր ելլալով պահած
էր զանի • այս խորհուրդը իրեն սիրտ
տուաւ • Սկըսաւ բոլոր սենեակները
պարտիլ • ամեն տեղ տղան փնտուելով •
բայց անօգուտ տեղը • Այն ատեն վա
խէն պաշարուած վար իջնալով հարցուց
ծառաներուն թէ ո՞ւր պահէր էին պըղ
տիկ Հենրիկոսը • Ոչ և մէկը կրցան

հասկերնայ . ապշու թեամբ իրարու կը
 նայէին . և այն սրահը որուն մէջ կը
 պարէին քանի մը վայրկեանի մէջ պար-
 սուեցաւ . նուազածուներն ալ խառ-
 նակու թեան ասուն գայիս առանց խոս-
 տացած վարձքերնին առնելու . Տերղը
 սասաիկ հետադառու թեան մը տակ մը-
 տաւ , բայց սղան չի գանուեցաւ . երբ
 սանը բոլոր անկիւնները կը դիտէին
 տեսան որ շատ մը ծանրագին քաներ
 նայնպէս աներեւոյթ ելեր էին , որով
 ամեն մարդ հաստատուեցաւ այն խոր-
 հրդին վայց , թէ պարած ասուննին
 գողեր բերդը մանելով ձեռքի տակ ե-
 ղածները սանելով այն սենեակը կողոպ-
 տեր էին . Մանկով սղուն գողցուիլը
 հաստատուեցաւ . Այս դիպուածը մեծ
 վիշտ մը պատճառեց և ուրախալից գա-
 ւիթը որ կը վայելէին ողբի և սուգի
 փոխուեցաւ .

Բո որ ունեցածս կուտայի թէ որ
 այս թշուառ երածիշաները հոս չի
 գային , ըսաւ վերակացուն ապշելով .
 հիմայ ի՞նչ պիտի պատասխանեմ . թէ
 որ տեսնուեալ գարձած ասունը իմ տես-
 չու թեանս հաշիւը ուզէ .

— Եւ ես , ըսաւ սենեկապան կինը



լալով, ի՞նչպէս պիտի կրնամ տիկինին
առջին ելլել առանց իւր որդւոյն, որն
որ ինձի այնչափ խնամքով յանձնեց.
կը ձգեմ իմ վեց տարուան վարձքս թէ
որ Հենրիկոսը գտնուելու ըլլայ. խեղճ
կինը կսկիծէն պիտի մեռնի.

Ամենէն աւելի խեղճ Մարգարիտան
կը սգար սոսկալի յուսահատութեան մը
մէջ իյնալով. ինքրզինքը բերդին վտակ-
րուն մէջ պիտի նետէր, թէ որ բռնե-
լու չըլլային. ո՛հ, այս անհնադանդու-
թիւնը ո՛րչափ սուղի կը նստի ինձի կ'ը-
սէր կուրծքը զարնելով. ի՞նչպէս կըր-
ցայ դիւրութեամբ այս տղան թողե-
լու յորդորուիլ, շատ երջանիկ էի այս
սանը մէջ, և ահա հիմա ամեն բան ին-
ձի համար կը փոխուի.

Գ. Լ. Ո Ի Խ Գ.

Փափկասիրտ մօր մը կսկիծը:

Բերդին ծառաները տղուն սենեա-
կին մէջ լալը կը շարունակէին հառաչե-
լու ձայներ արձակելով. Մարգարիտա

գետինը փռուած և երբեմն դիւահա-
 րած մէկու մը պէս աչքերը արցունքով
 լեցուած օրօրոցին վրայ կը դարձունէր :
 Հենրիկոսին փոքրիկ ծածկոցին վրայ
 շարուած վարդերը գետինը նետուած
 էին, անոնք հոն սեղը իբրեւ թէ ամ-
 բաստանող վկաներ էին, որ այս մարդոց
 անխռհեմ առաջնորդութիւնը կը յան-
 դիմանէին, դեռ այս դիպուած իսպառ-
 ճառած վախը ամենուն սիրան էր, երբ
 մարակի շախրատքը լսեցին, և անսան-
 մէկ կառք մը որ գաւթին մէջ կը վա-
 դէր : Տիկինն է, ըսաւ մէկը, և մահ-
 ուան ատղճնութիւնը բոլոր դէմքերուն
 վրայ նկարուեցաւ :

Իշանֆէլսի կոմսն առջի կարծած-
 նուն պէս շատ վտանգաւոր կերպով
 վիրաւորուած չէր, անոր վրայ ըսած
 հոգերնին հիւանդութեան առջեւը ա-
 ոին և ամուսնոյն ներկայութիւնը շու-
 տով առողջանալուն շատ նպաստեց :
 Եւ երբ վիճակը շտկուեցաւ, Աստի այրա-
 արատրաց ետ դառնալ իւր սիրելի ողոր-
 ւոյն քով, բայց ինչպէս զարմացաւ,
 երբ գաւթի ժրմտած ատենը չի անսա-
 իւր մարդոցը արատնօք առջեւը ել-
 լելնին : Զի գիտցաւ այս լռութեան և

առանձնու թեան պատճառք. արագու
 թեամբ կը վազէ այն սենեակը ուր կը
 յուսայ իւր տղան գրկել. Անոր գա
 լուն ամենքը կ'սկըսին վախշի, Մարգա
 րիտա իւր ատրուհին կը ճանչնայ, յու
 սահատու թեան ձայներ արձակելով
 գէմքը կը ծածկէ. ատրուհին դողալով
 անոր աղաղակը լսած ետ կը քաշուի
 կասկածելով դժբաղդու թեան մը համե
 դիպած ըլլալը, չի համարձակիր առաջ
 երթալ, վախնալով գէշու թեան մը լու
 րը առնելը. իսկայն կը տեսնէ տղուն օ
 բորոյր, իւր որդւոյն գգուանքներուն
 տեղը միայն մահուան լու թիւնը կ'ըն
 դունի. Թողմած վարդերը, Մարգա
 րիտային արցունքները, ծառաներուն
 հեռաւորութիւնը առաջուրնէ իւր
 սրտէն անցածը կ'իմացընեն. հարցմուք
 ներ կ'ընէ որուն և ոչ մէկը չի կրնար
 պատասխանել. Այն ասան կը դողոյ
 իւր սիրելւոյն մահը հասկընալով. սյն
 ասան Մարգարիտային քանի մը յուսա
 հատու թեամբ ըրած խօսքերէն կ'իմա
 նայ իրեն հասած դժբաղդու թիւնը.
 այս լուրը այն աստիճան կը շփոթէ, որ
 ճանաչողութիւնը կորսնցունելով ծա
 ռաներուն բազուկներուն մէջ կ'իջնայ

կը մարի . Ամենքը անոր օգնութեան
 կը վազեն , քաւորդ մը անցելէն ետքը
 ինքրդինքը դանելով ցաւալի կերպով մը
 սիրաս առայ , ա՛հ , Աստուած իմ ,
 ի՞նչ վիշտեր կրել կուտաս ինձի , ա՛հ
 Հենրիկոս , իմ յոյսս եւ երջանկութիւնս ,
 ի՞նչ եղեր ես արդեօք . արդեօք պիտի
 տեսնեմ զքեզ հեղ մըն ալ , ո՛ւր ես հիւ
 մա . որ քու սիրուն ժպտելուդ տե
 ղը , միմիայն միսիթարանք պիտի ունե
 նամքու անարդ չարագ որձներուն ձեռ
 քը ըստուդ ահռելի խորհուրդը . ու
 ընդ քեզի իրենց արհեստին պիտի վար
 ժեցունեն . ի՞նչպէս այդչափ պղտիկ
 աւանց քու ծնողքդ ճանչնալու գող
 ցուեցաւ , թէ որ մահէն յափշտակուե
 իր , այնչափ չէի ցաւեր որչափ որ հիւ
 մա . դձե՛կ գերեզմանդ արցունքներովս
 թըջ՛լով կը միսիթարուէի , երկինքը ին
 ձի համար ազօթող հրեշտակ մը ունե
 նալս խորհրդածելով . բայց հիմա սիրաս
 քու ապագայ վճակիդ վրայ կը խռովի .
 Ալ դձե՛ն , իմ տարաբաղդ ընկերս , որ
 հազիւ քու կեանքդ ատացար , պիտի
 կրնաս այս ցաւալի լուրին դիմանալ .
 թ՛չնամեայն սուրը չարաչար վիրաւորեց
 զքեզ , իսկ փոքրիկ Հենրիկոսիդ կու

րուստը ալ եւել սաստիկ կսկիծ մը պիտի տայ անձիդ .

Մասն արցունքներ խեղճ մօրը ցաւալից սիրտը քիչ մը հանդարտեցուցին . խաչելու թեան պատկերի մը առջեւ ծունկի վրայ գալով , և աղերսարկու թեամբ բազկատարած ըսաւ . « Հայր վշտացելոց մարդասէր Մատուած , որ ամենեւին քեզի յուսացողները ձեռքէդ չես ձգեր , ահա առջիկ խեղճ մայր մը , որ քու ողորմու թիւնդ կը խնդրէ աւազակներէն գողցուած պղտիկ աղու մը համար . երկրի վրայ ունեցած ամենէն պատուական բանին համար կ'աղաչե . թող ճշտոյ ձագերը քեզի կը մաղթեն և դուն անոնց աղաչանքը ընդունելով կը կերակրես զիրենք . ո՛հ , պաշտպանէ իմ որդիս , և մի՛ թողուր ամենեւին չարագործներուն զոհ ըլլալու , որք կը պահեն զանի իրենց խորունկ քարայրին մէջ . Ոչ և բան մը առանց հրամանիդ կրնայ ըլլալ երկրի վրայ . գթանալուս աղուն վրայ , և բարեպաշտ մեծ . ցո՛ւր պահպանէ զանի , և ինձի և ամուսնոյս բաւական կարողութիւն տո՛ւր այս դժնդակ ձախորդութեան դէմ կենալու համար .

Այս սրտառու և աղօթքէն ետքը Ա-
 տէլայիտ ելլալով ցաւակցութեան հա-
 յեցուածք մը արձակեց քովը եղողներ-
 րուն վրայ . Մարգարիտա միշտ յուզ-
 ման մէջ էր . իւր անհնազանդութեան
 յիշատակը անձին անմեկնելի տանջանք
 էր . և կոմսուհին քիչ մը հանդարտած
 գտնելով յանցաւորի կերպարանքով մը
 անոր մօտենալով ոտքը ինկաւ թողու-
 թիւն գոչելով ըսաւ , շատ կ'ուզէի բո-
 լոր արիւնս թափել այս սիրուն տղան
 անօրէն յափշտակողներուն ձեռքէն ա-
 ռատելու համար . թէ որ մեռնիր կ'ու-
 ղես , այս վճռիս պիտի հնազանդիմ ,
 որովհետեւ ամեն կերպով արժանի եմ
 այս պատժիս . Այլ'ը Մարգարիտա , ը-
 սաւ կոմսուհին , վեհանձն ձեռքը անոր
 երկնցընելով . ամենեւին չենք ուզեր
 քու մահդ , կը ներենք մեզի ըրած վը-
 նասդ . գոնէ այս ահուելի գործը խրատ
 մը լուայ քեզի , նայէ որ քու թեթեւա-
 մտութիւնդ հեշտութեանց սէրդ և
 անհնազանդութիւնդ ի՛նչ ըրին քեզի .
 խրատ առ այս դիպուածէն որ սուգի
 մէջ կ'ընկղմէ զմեզ և գիտցի՛ր փափաք-
 ներդ չափաւորել . Այս օրէն 'ի վեր
 աշխարհի վրայ ուրախութիւն չի պի-

տի աւնեւամ, այլ միայն ողբալ և լալ և
 կոմսուհւոյն այն աղջկանք ցրցու-
 ցած աղնուսկան և քրիստոնէականել
 վարմունքի խորունկ տպաւորութիւն
 մը պատճառեց, միւս ամեն ծառանե-
 րը եկան. Մոկայիս հարցուց անոնց
 այս ճախորդութեան հանդիպած ժա-
 մանակը: Տեղ տեղ իր մարդոցմէն խաւ-
 րեց որ կորուստը փնտրուելով, աւա-
 զակներուն հետքը գտնեն. իսկոյն գա-
 ցին ոմանք ուրոյ ոմանք հեծեալ, ա-
 մեն կողմ աչքէ անցուցին և ամենե-
 ւին բան մը չի գտնելով բերդը մտան
 սրտաբեկ:

Խեղճ Մարգարիտա լայէն չէր դա-
 դարեր, և գրեթէ բան մըն ալ չէր ու-
 տեր: Բանի մը շաբաթէն ետեւ այն-
 չափ անգուճեցաւ և վատուեցաւ որ
 բերդին երկայն սրահներուն մէջ շուրի
 մը պէս կ'երեւար, ամենքը կը խղճային
 զանի և կը շանային անոր ուժ տա ու-
 իսկ և ոչ բան մը կրցաւ զանի միսթա-
 րել: Օր մը բողբոջին աներեւոյթ ու-
 լալով, հասկրցան որ գիշերը բերդէն
 փախած էր և լեռները գացած: Այս
 վայրկեանէն ետքը չի կրցան գիտնալ
 ինչ ըլլալը:

ՔՐԻՍՏՈՍ Գ.

Աւաղակներուն մութ բարոցը:

Քաղաքը դեռ պատերազմէն փախ-
չող մարդ սցմով լեցուած էր. աստեղ մէջ
ծեր Պօհէմիացի կին մը կար, որ կա-
խարդ ու թիւն կ'ընէր. պզտիկ Հենրի-
կար գողցողը աս էր. Քանի մը որ ա-
ռաջ ասիկայ բերդը տեսեր էին որ ծա-
ռաներուն իւր կեղծ գիտութիւնը ցու-
ցունել կը խոստանար, ճարտարու-
թեամբ բնակու թեանը ելքը դիտելով
հոռապաճուներն ալ այս բանիս միա-
խորհուրդ ուրախով, բերդին ծառաները
զուարճանալու համար ժողուած ատեն
նին գարշելի Պօհէմիացի պարտիզպա-
նին աղուն Գէորգին բաց ձգած դուռ
նէն պարտէզը մանելով հնկէց աղուն
պառկած սենեակը գնաց. ասանկով կր-
ցաւ գողանալ տղան և հոն գանուած
ուրիշ ծանրագին բաները.

Տղան ձեռքը անցընելուն պէս շու-
տով կամացուկ մը փախելով անտառին

քերանք եղած խիտ մացառքներուն
 մէջ պահուըտեցաւ, սպասելով որ գի-
 շերը իւր թախառական ընթացքին նը-
 պաստէ. բաւական կերակուր ունենա-
 լուն համար, Հենրիկոսին հոգ տարաւ
 և երկար ժամանակ ճամբայ ընելէն ետ-
 քը լեռները հասաւ, ուր աւազակնե-
 րու բնակու թեան տեղի քարայր մը կար.
 այս այրը բաւական ընդարձակ հին ա-
 տենէն մնացած հրապարակի մը տեղ էր
 շատոնցու ընէ անբնակ, և որուն շատ
 տեղերն ալ փլած էր. աղէկ յարմար կու-
 գար աւազակներուն եղեռնագործու-
 թեանցը, հոն ապահով ըլլալուն հա-
 մար. որովհետեւ դուռը ծածուկ և
 ուրիշ մարդոց անձանօթ էր. Հողին
 տակէն շատ երկայն ու նեղ ճա՛քաներ
 կային, որոնցմէ մէկը երկաթէ ահագին
 մեծու թեամբ դռան մը կը հասնէր, ո-
 րուն բանլիքը Պօհէմիագիին քովն էր.
 Այս դռան հասնելով, ծեր կինը աղան
 և ուրիշ գողցած բաները գետինը դը-
 րաւ. ետքը դժուարու թեամբ ծանր
 դուռը բանալով առաւ աղան և այն
 նեղ ճամբուն մէջ մտաւ գողերուն ի-
 մացունելու համար. Գողցուած բանե-
 րուն ամենն ալ այս տեղս էին. սնտուկ

ներուն մէջ ծանրագին բեհեղներ կա-
յին, տեսակ տեսակ գոհարեղէններ,
ազնիւ քարեր և տեղ տեղ ոսկի և ար-
ծաթ:

Օեր կնկանը տղան հետը առած
համիլը մեծ ուրախութիւն պատճա-
ռեց չարագործներուն, որք սեղանի մը
բայորաիքը շարուած թուղթ կը խա-
ղային երբեմն երբեմն շատ ըմպելիքներ
խմելով: Այս անգգամ մարդոց չարա-
գուշակ դէմքը, սպառնալից աչքեր-
նին, երկայն ու տգեղ մորուքնին, զօ-
րաւոր շարժմունքնին, հայհոյութիւն-
նին և վերջապէս գէշութեան խորունկ
սովորութիւնները դէմքերնուն վրայ
տպաւորուած, կրնային զօրաւոր մար-
դիկ անգամ վախցընել:

« Աչ, բարի մայր, ըսաւ այս խում-
բին գլուխը կատաղի կերպով մը, ահա
մեծ յափշտակութիւն մը, կոմսին սր-
ղան իբրեւ մեզի գրաւ պիտի ըլլայ թէ
որ մեզնէ մէկը դատաւորներուն ձեռ-
քը իյնայ. շատ ատենէ ՚ի վեր կը ցան-
կայ իր գիւղին մեծաատուններուն մէկին
տղան ձեռքս իյնայ. ա՛ռ խմէ տղուն
կենացը, և պատմէ մեզի նայինք ի՞նչ
պէս ըրիր այս աւարը »:

Պատաւը հնազանդելով իրեն տուած
 գաւաթ մը սաստիկ ըմպելիքը մէկ ան-
 գամուն խմեց . իսկ գողերուն ուրա-
 խութիւնը ալ եւել եղաւ , երբ բեր-
 դէն գողցած ուրիշ բաներն ալ ցոյց
 տուաւ : Մեղք , ըսաւ չարագործներէն
 մէկը , թէ որ ես հոն ըլլայի , բանի մը
 բան ալ կը յափշտակէի . հարուստները
 այս տեսակ խաղաղիքներ շատ ունին .
 ձեռքին մէջ ոսկիէ գեղեցիկ շղթայ մը
 կընելով որուն վրայ ծանցագին միտալ
 մը կատուած էր :

Այս տղուն վրայ շատ հոգ տանե-
 լու ես , ըսաւ աւազակներուն գլուխը
 ծեր կնկանը . ասոր աղէկ նայէ , ամե-
 նեւին բան մը պակաս մի՛ ըներ . այդ
 ջանքը ինծի կ'իյնայ , ըսաւ Պօհէ-
 միացին , կ'ստատանա՛մ քեզի արժանի
 զաւակ մը ընել ասիկայ :

— Բայց նայէ որ ընտանեացը հա-
 մար բան մը չի խօսիս իրեն , որովհե-
 տեւ ետքը ահռելի հեատեւանք մը կըր-
 նայ ունենայ :

Գողերը նորէն սկըսան խաղալ և կե-
 նը տղան կը հոգար : Այս խաւարային
 այրին գարշելի խռոռչի մը մէջ , ուր
 արեգական արդիւնաւոր շառաւիղնե-

րը ամենեւեին չէին թափանձեր, մեծ-
 ցաւ փոքրիկ Հենրիկոսը. Մութ անցքը
 Տիշտ և հանապազ վառ կեցող կանթե-
 ղի մը լուսովը կը լուսաւորուէր, և ու-
 բուն աղօտ լոյսը այս բնակչութիւնը ա-
 ռաւել սարսափելի կ'ընէր. Վայռին
 կամարին միւս կողմը շատ ճեղքուածք-
 ներ կային, և կ'երեւարոր աման վայր-
 կեան հոն բնակող անօրէն անձիւքը կը-
 լել կը սպառնար.

Պաշարնին շատ էր. որովհետեւ գո-
 ղերը, որք կերպարաններ կը մտնէին
 դասաւորներուն ձեռքէն փախչելու
 համար, աղէկ ուտելու խմելու պէտք
 եղած բաները կը բերէին. բանի մը արիւ-
 գիւնիով, գարեջրով և սգեղէն բնակ-
 լիքներով լեցուած սակաւով ալ ջուր.
 Միսով, հացով, կարկանդակներով, միրգ ե-
 րով և բանջարեղէններով լեցուած. շա-
 րագործներուն յառաջատեսութիւնը կը
 գուշակէին. Մանրագին գորգեր, ու-
 բոնց մէջ կը փաթթուէին քնանալու հա-
 մար հարթ սեղերու վրայ փռուած է-
 ին. վերջապէս իրենց հարկաւոր բան
 մը չէր պակսեր.

Հենրիկոսը գողցուած ատենը շատ
 պզտիկ ըլլալով, ամենեւեին հօրը բերդը

բնակիլ չէր յիշեր . քանի որ խելքը
հասնել սկսաւ , իւր բնակած գերեզ-
մանէն դուրս այս ըլլալն անգամ չէր գի-
տեր . պառաւր շատ կ'զգուշանար տը-
ղուն բան մը ըսելու . և միշտ ոչինչ
խօսքերով ժամանակը կ'անցունէր . կա-
մաւ զանի ամենէն պարզ բաներուն ան-
գամ խորունկ տգիտութեան մէջ ձգե-
լով , իւր ջանքերը միմիայն աղէկ սը-
նուցանել և հագուեցընել էր , առանց
ուրիշ բան մը սորվեցընելու . որով ոչ
չարը և ոչ բարին , ոչ զ՛ստուած և ոչ
իւր պարտականութիւնը կրցաւ ճանչ-
նալ . նմանապէս կարգալ գրել ալ չէր
գիտեր .

Աւագակներուն ամենն ալ իրենց տի-
րոջը պէս ապականուած չէին . ասոնց
մէջ Ռիքարտ անուանով երիտասարդ մը
կար անուանի գերդաստանէ մը սերեալ .
որն որ խաղի սիրով անոնց հետ խառ-
նուելով բոլոր ունեցածը կորսնցուցած
էր . որով ալ չի համարձակելով հօ-
րը տունը երթալ , այս խուճիկ խառ-
նուած գողութիւն կ'ընէր . այս մարդս
որ միւսներուն ապականութեան առ-
տիճանին հասած չէր . պզտիկ Հենրի-
կոսին վրայ խղճալով , ուզեց անոր հա-

ճոյք մը ընել . երբեմն երբեմն անոր
 գեղեցիկ փայտէ խաղալիքներ բերելէն
 ետքը պղտիկ սուր մը , և թմբուկ մը
 տուաւ . անգամ մըն ալ սրինգ մը , բո-
 ժոժ մը , հայլի մը , և նուագարան մը .
 ()ր մըն ալ այլեւայլ գունով թուղթե-
 րով շինած ծաղիկներ բերելով , իրեն
 ա շինելը սորվեցուց . Այս կերպով
 սղուն գերութիւնը ծեր Պօհէմիացի-
 ին հետ մնալէն քիչ մը թեթեւցուց .

Բերդէն գողցուած բաներուն մէջ
 Ատէլայիտի մէկ փոքրիկ կենդանագիրն
 ալ կար , անդամանդով զարդարուած
 ոսկիէ շրջանակի մը մէջ . Տղան շատ կը
 սիրէր այս սիրուն պատկերը , որն որ
 Պօհէմիացիին շատ քիչ անգամ և կամ-
 քը ուզած ատենը կուտար . Ռիքարտ
 երբեմն կը նկատէր այս նկարը . և սիր-
 ար կը շարժէր Հենրիկոսին բաղդին վը-
 րայ . և կ'ըսէր ինքնիրեն , ի՞նչ բարբա-
 րոտութիւն այսպէս աղէկ մայր մը իւր
 զաւակէն զատել . ի՞նչ մեծ տարբե-
 րութիւն այս փոքրիկ անմեղին հոս ան-
 ցուցած կեանքին և հօրը առնը ան-
 ցունելիքին մէջ . ո՛հ , որչափ կ'ուզէի
 գրեզ այս սոսկալի բնակութենէն հե-
 ուացընելով , ծնողացդ հասցընել . բայց

անկարելի է, որովհետեւ եւս ալ գերի
 եմ հոս, և վասխելու պղտիկ փորձ մըն
 ալ կեանքս վասնդի մէջ կը դնէ. այս
 ասուր վիճակիս վրայ համբերելով
 բռնադատուած եմ մարդկային զգաց-
 մունքները ուրացող անձանց հետ բը-
 նակիլ, բայց կը յուսամ կարելի օր մը
 զիս այս աւազակներուն ընկերու թեա-
 նը մէջ արգիւղ կապը. երանի թէ այս
 վայրկեամբ շուտով համնելով առաքի-
 նու թիւնն ու ինքզինքս ճանչնամ:

Հենրիկոսը Ռիքարտը շատ կը սի-
 րէր, և անոր հետ միմակ ըլլալուն պէս
 անոր գիրկը կ'ելնէր, և կ'ազաւէր ի-
 ռեն պատմու թիւն մը բսել, որն որ Ռի-
 քարտ շատ հաճաթեամբ կը կատա-
 րէր. կ'ուզէր անոր Մատեոս վայրժ-
 խօսիլ, բայց կը վախճար ուրիշներուն
 կասկածը արթնցընելէն. և եւել եւե-
 լօք Պ հեմիացիներ, որ միշտ անոնց խօ-
 սակցու թիւնը մտիկ կ'ընէր:

Այս կերպով շատ սարիմեր անցան,
 գողերը միշտ իրենց առաջատակու թեան-
 ցը մէջ բարեբաղդ գանուած, մերձակայ
 գիւղերը կողոպտելով միշտ աւարներով
 կուգային, երբեմն ամբողջ շաբաթներ
 ուրը կը մնային, մանաւանդ թէ որ ա-

ուաջուրնէ աղէկ գողութիւն մը բրած
 ըլլային, իրենց արշաւանքը կ'ուշայր-
 նէին հասարակաց ուշադրութիւնը
 շատ չի գրգռելու և առաւել ապահո-
 վութեամբ իրենց անօրէն գործին պա-
 տաղելու համար: Թէ որ առանձին ճա-
 նասարհորդ մը կեղեքէին, կալուած մը
 յափշտակէին, կամ հարուստ սեղանա-
 լորի մը դրամասեղանը կողոպտէին,
 միշտ նոր ուրախութիւններ կը կատա-
 րէին: ամեն կողմէն բողոքներ բարձրա-
 ցան, բայց չարագործներուն ձեռք
 ձգուիլը անհնար եղաւ: որք իրենց խա-
 լարային բնակութեանը մէջ դատաւո-
 րաց զիրենք ձեռք ձգելու համար բրած
 ջանքն վրայ կը խնդային: շատ ճարակ
 ըլլալով դիւրին չէր զանոնք գտնել կամ
 նուաճել: ահռելի երդմունքները զա-
 նոնք միաւորեր էին: Բայց թէ եւ մարդ-
 կային արդարութիւնը անկարող եղաւ
 անոնց չարագործութեան առաջին առ-
 նել: Բայց Աստուծոյ դատաստանը բուն
 այս աղուն անձին վրայ վրէժխնդիր մը
 կը պահէր, որն որ միայն իրենց կորուս-
 տը պատճառելու համար գողցած էին:

Հենրիկոսը կը ջանայ փախչիլ :

Ատէլայիտի որդին այս ստորերկեսայրին մէջ մեծցած ատենը , նորահաս երեւակայութիւնը իւր տերանցը հեռաւորութեան պատճառը իմանալ կը փափաքէր . քանի մը անգամ այս բանին վրայ անոնց հարցմունքներ ընելով , ուղեց հետ երթալ . բայց անոնք զանի ծաղրելով թախանձանացն ալ ականջ չի կախեցին . ուստի միտքը դրաւ այս բանին վրայ Ռիքարտին խօսելու , և պատեհ ժամանակի սպասեց :

Օր մը քնացած ատենը աւազակներուն ամենքն ալ այրէն հեռացած էին , և արթնցած ժամանակը ինքրզինքր մինակ Պօհէմիացիին հետ գտաւորուն ընկերութենէն շատ կը ձանձրանար : Այս գարշելի կինը շատ անգամ սողան չեխելով իրեն անմեղ հարցմանցը կոպտութեամբ կը պատասխանէր , շատ անգամ խօսքը խստութեամբ միջահաս

ունելով ամբողջ ժամեր ատուր լուսթիւն
 մը կը պահէր. աչքերն ալ շատ տկա-
 րացած ըլլալուն համար լայն վարագու-
 ըի մը ետին նստած կտաւիքներ կը շքա-
 կէր, երբեմն ստակ կը համրէր, և կը
 ճգէր տղան քարայրին մէջ զբօսնելու.
 Նթեղին մէջ իւր դնելէն ետքը ան-
 շնին վրայ նստած սկրսաւ քնանալ.
 Հենրիկոսը որ միշտ զանի կը դիտէր,
 քնացած ատենը յարմար գտաւ այրին
 նեղ ճամբաները աչքէ անցունելու,
 ինչ որ արագ մը վառելով դէպ ՚ի ա-
 շղակներուն ելած տեղը գնաց և բա-
 ւական ժամանակ թափառելով երկթե-
 մեծ դրան մը հասած փորձեց զանի
 բանալ, բայց չի կրցաւ. Առանց վհա-
 տելու զգուշութեամբ ետ դառնալով
 ուրիշ քանի մը նեղ ճամբաներ ալ տե-
 սաւ որ գետնին տակը աներեւոյթ
 կ'ըլլային. ասոնց ուր վերջանալուն վը-
 րայ հետաքրքիր ըլլալով մէկուն մէջ
 մտած երկար ժամանակ առանց ելքը
 գտնելու սկրսաւ քալել. Արդէն ճրա-
 գրն ալ մարելու վրայ էր, երբ հեռու-
 անց իրենինէն եւել ցոլացում ունեցող
 լոյս մը տեսաւ, քիչ մըն ալ առաջ եր-
 թալով ինքզինքը կացինով կտրուածի

պէս երկու ճեղքուած ժայռերուն մէջ
տեղը գտաւ և ճանկուտելով անոնց վը-
րայ ելլելէն ետքը իրեն մօտը եղած
թուփերուն պլլուելով մէկ ցատկելուն
ահագին անդունդէն դուրս ելաւ և
ինքրզինքը ազատութեան մէջ գտաւ .

Անկարելի էր խեղճ տղուն զարմա-
ցումը պատմել իրեն համար այնքան
նոր բաներուն վրայ . գլխուն վրայ տա-
րածած կապոյտ կամարը . մութ քարայ-
րին տեղ երկնից անսահման տարածու-
թիւնը , այն վայրկեանէ վայրկեան ե-
լելոց լոյսը , այն ահագին մեծու-
թեամբ անտառներով ծածկուած լեռ-
ները , այն մարգագետինները որք ա-
մեն տեղ իրենց գեղեցկութիւնը կը
տարածէին , այնքան մեծ տպաւորու-
թիւն մը ըրին չենդիպոսին վրայ որ
ինչ խորհրդածելը չի գիտցաւ . Ահա
իւր երեւակայութիւնը առաւել ապ-
շեցրնող բան մը . արեգակը հսկայածեւ
գիշերային մթութեան մէջէն ելլելով
երկնից ընդարձակ դաշտերուն մէջ կը
յարձակէր և ծիրանի ալիքներով շրջա-
պատած հորիզոնին վրայ կը ցլանար .
ամեն տեղ աչքերը պարացրնելով կը
նկատէ զարմացմամբ ծաղիկներով զար-

դարուած գետիւնը . ծառերը որոնց վը-
 րայ խատուտիկ թռչուններ կը թռչը-
 տիին և օդը պատող կրակէ շառաւիղ-
 ները . այն ասուն ականջը թռչնոց գե-
 ղեցիկ ճայներէն կ'զմայլէր , և քիչ մը
 հեռուն եղող վտակ մը մերձակայ լը-
 ճէ մը ելած կը թափէր կարկաշտով
 մամուռով ծածկուած բարձր ժայռե-
 րուն մէջ տեղէն . Օարմանքէն ան-
 շարժ կեցած ամեն բան դիտելով չի
 կրնար յագենայ այս շքեղ տեսարանէն
 ամեն բան զանի կ'ուրախցրնէին , միտ-
 քը կը յափշտակեն և անմեկնելի կեր-
 պով մը երջանիկ կ'ըլլայ , առանց իւր
 երջանկոթեան պատճառը գիտնալու .
 վերջապէս մինչեւ այն ասուն պահած
 լուսթիւնը միջահատելով կ'ըսէ ինքն
 իրեն , ս'ւր եմ , ո'ւրկէց առաջ կու-
 գան տեսած գեղեցկու թիւններս . ո'ր-
 չափ սքանչելի են այս ամեն բաները , և
 նորէն աչքին երեւցած խել մը բանե-
 րը դիտելու կ'զբաղի . հոս ժայռ մը որ
 բուրգի մը պէս դէպ'ի երկինք կը բարձ-
 րանայ . հոն թուփ մը որուն վայրի վար-
 դերը քաղցր հոտեր կը բուրեն . ան-
 դին հինաւուրց կաղնի մը , որուն
 գագաթը հողմերէն կը շարժի . իսկոյն

արեգակը ամայերուն մէջէն ցոյալով բո-
 լոր պայծառութեամբը լերանց վրայ
 կ'երեւի հեռուները բոցեղէն հասանք-
 ներ կ'արձակէ • մինչեւ այն ատեն դա-
 նի պատող թախանցիկ կազի շոգիները
 սպառելով • Այս պայծառ լոյսը՝ որ բո-
 լոր բնութեան կենդանութիւն տալ կը
 թուէր, այնքան ուրախութիւն պատ-
 ճառեց շենրիկոսին, որ իւր փոքրիկ
 ձեռքերը երկնցուց զանի բռնելու հա-
 մար • Բայց աչքերը արցունքով լեցուած
 պարտաւորեցաւ անդին դառնալ • ար-
 զան միշտ հազար ու մէկ այլեւայլ ըզ-
 գացմունքներու մէջ իյնալով շարունա-
 կեց իւր ուշադրութիւնը, և փախուկ
 մարդագետիներ զարդարող ծաղկները ոտ-
 քի տակ առնելու վախճալով չէր հա-
 մարձակեր ոչ առաջ երթալ և ոչ ետ •

Բայց իւր հետաքրքրութիւնը պար-
 տաւորեց զինքը կեցած տեղէն հեռա-
 նալ, և բլուրին տակը գառնուկ մը տե-
 սաւ որուն կակուղ և ձերմակ բուրդը
 յիշեցրնել տուին Ռիքարտին իրեն բե-
 րած փայտէ ոչխարները, մէկ ցատկե-
 լուն անոր վրայ կը յարձակի գգուելու
 համար • Բայց կենդանին մայելով կը
 փախչի • Շենրիկոս պզտիկ գառնուկին

աղաղակը լսելով զարմացած էր կենաց •
 ի՞նչպէս, կ'ըսէ, այս գառնուկը կը
 մայէ • շատ բան Ռիքարտին բերածնե-
 րը ոչ կը շարժէին և ոչ կը պօռային •
 նայիմ ասիկայ կը խօսի՞ մի • և սկըսաւ
 կենդանւոյն այլեւայլ հարցմունքներ ը-
 նել, որուն պատասխանը միմիայն ձայ-
 նը առաւ • Տղան գառնուկին բերնէն
 ամենեւին խօսք մը չառ նելուէն վրայ քիչ
 մը բարկացած էր չեխէ զանի չի պա-
 տասխանելուն համար •

Այն ատեն նոր զարմացում մը զին-
 քը յուզման մէջ ձգող կիւքը կ'եվել-
 ցունէր • կը տեսնէ որ ժայռէ մը վար
 երիտասարդ մը կ'իջնայ ձեռքը երկար
 գաւաղան մը բռնած, որուն ծայրը դը-
 գայի ձեւով երկաթ մը կը շողար • այս
 գեռահաս հովիւը՝ ժամէ մը ՚ի վեր լեռ-
 ներուն մէջ կորսնցուցած ոչխարը կը
 փնտրուէր • և զարմացած մնաց, երբ
 կենդանւոյն քով պզտիկ տղայ մը տե-
 սաւ • երկուքն ալ ապշութեամբ իրա-
 րու նայելով, Հենոթիկոս վախցաւ այս
 դիպուածէս, և վախնալով որ գաւա-
 զանովը երիտասարդը զինքը մուծ քա-
 ըայրը տանելու համար եկած չըլլայ •
 չէր համարձակեր առաջ երթալ • իսկ

հովիւք զանի ապահովցունելով ըսաւ ,
որ ամենեւին չարիք մը չէր ուզեր հաս-
ցունել իրեն :

Տղուն վախը քիչ մը անցնելով, հոն-
տեղացի մարդոցը պէս չար ես դուն ,
ըսէ ինձի որ այս ծառերն ու սա մեծ
քարայրը քո՞ւկդ են , կը հաճի՞ս որ քե-
զի և քու ոչխարիդ հետ կենամ . խօսք
կուտամ ալ որ խելքը ըլլամ ըսաւ :

Երիտասարդը ամենեւին բան մը չի
հասկըցաւ ասկից , և հարցուց Հենրի-
կոսին թէ ո՞ւրկէց կուգար . այն ատեն
տղան ցուցնելով անոր ժայռին պատառ-
ուածքը ուսկէց քիչ մը առաջ դուրս
ելած էր , պատմեց անոր ստորերկրեայ
խռոռչին մէջ եղածները . երկայն մօ-
րութով մարդիկը , բարի Ռիքարտը որ
իրեն հետ կը խաղար , հոն կերակուր
եփող պառաւ Պօհէմիացի կինը , քա-
րայրը պարտելու համար վառած ճրա-
գը և երկրթէ դուռը եւայն . Այս ճրչ-
մարիտ պատմու թիւնը այնքան մեծ եր-
կիւղ մը պատճառեց հովիւին , որ տը-
ղան գիրկը և ոչխարը ուսը առած բո-
լոր ու ժոյժ կոսաւ վախչիլ . խել մը
ժամանակ երթալէն ետքը պարտու-
րեցաւ հանգիստ առնել և Հենրիկոսին

այլեւայլ հարցումներն ընելով, այս
 թաղին չարագործներէն ասպատակ-
 ուած ըլլալուն խորհուրդին վրայ հաս-
 տատուեցաւ: Այս անգեկու թիւննե-
 րը հրատուրեցին զանի այնչափ քիչ ա-
 ղէկ անգէ մը հեռանալ:

Գ Լ Ո Ւ Խ Օ Ք:

Անաստատական մը:

Դողերուն պահուած շղթայակապ
 լեռներուն արեւմտեան կողմը գեղե-
 ցիկ հովիտ մը կար, Մէնրատ անուն
 ու թսուն տարուան յարգոյ ճգնաւորի
 մը բնակուած: քողոր գաւառը զանի կը
 յարգէր առաքինութեանցն ու բար-
 ճըն գթութեանը համար: Աս աղէկ
 մարդը քաղաքին պատգամը աղքատաց
 բարեկամ և անկարաց միսթարիչ էր: Եւ
 ըհտասարդ հովիւը գնաց զանի գանելու
 այս վայրի քաղաքին մէջ կորսուած ար-
 զան անոր անձնելու: անաստատականին
 պարկեշտ սենեակը վայտէ շինուած
 էր խողանով ծածկուած մեծ որթի

մը ստուերացած և պտղատու ծառե-
րով պատած պարտէզ մը Մատուածա-
պաշտ ծերէն մշակուած ամեն տեսակ
հունձքեր և ծաղիկներ կը բուսցրնէր :

Այս զուարճալի դաշտը լճերով և
ամեն տեսակ զմայլեցուցիչ տեսարան-
ներով կը վերջանար . մերձակայ բլուրի
մը վրայ ճգնաւորը պզտիկ այգի մը տըն-
կած էր , որուն քով արտի մը մէջ ցո-
րենի ոսկեփայլ հասկերը կը ծփային .
ամեն բանի վրայ հոգ տարուած էր .
Թիզ մը անգործ երկիր չէր տեսնուեր .
միրգով լեցուած ծառեր այս անկիւնը
կը զարդարէին որոնց բերքը միշտ աղ-
քատաց կը բաժնուէր :

Ահագին ժայռի մը տափարակ տե-
ղին վրայ հայրն Մէնրատ գեղեցիկ մա-
տուռ մը շինած էր պզտիկ զանգակա-
տունով մը որուն ծայրը բարձրէն ասե-
ղի պէս կ'երևար , վրան ալ դրօշակ
մը բացած էր հողմերը հասկրնալու
համար . Աշտարակը ելլելու համար
ժայռին մէջ փորուած սանդուղիէ մը
կ'երևուէր :

Պարտէզին դրանը քով գեղեցիկ
խնձորենի մը կար որուն շուքը հեռու-
ները կը տարածուէր . և Մէնրատ ստ-

վորու թիւն ունէր տակը նստել Մատու
 ծոյ օրէնքներուն վրայ խոկալու և ա-
 ղօթելու համար, խորունկ խորհրդա-
 ծուծեան մը մէջ էր, երբ հովիւը ու-
 պզտիկ Հենրիկոսը գիրկը եկաւ: Յար-
 գի մօրուքը անոր սուրբի կերպարանք
 մը կուտար, քանի մը ցիրուցան ճեր-
 մակ մազեր գլխուն վրայ կը ծփային,
 իսկ ասունց ամենը դեռ ուժով ըլլալը կը
 յայտնէին:

Երիտասարդին տղուն հետ ներս
 մտնելը տեսնալով սիրաբորբոք անապա-
 տականը, գեղջուկ աթուէն ելլելով
 քիչ մը դէպ 'ի անունց գացած երիտա-
 սարդ հո/ուին իւր քովը տեղ ընծայեց:
 հովիւը պզտիկ Հենրիկոսը գեախնո դը-
 րած ատենը սիրով զանի իւր սրտին դը-
 նելով սխմեց և գիտցածը ու տղէն հաս-
 կըցածը պատմեց: Թէ որ ատանկ է,
 ըսաւ Մէնրատ՝ որ լռութեամբ պատ-
 մութիւնը մտիկ կ'ընէր, այս տղան իմ
 քովս պիտի կենայ, կ'ուզես սիրելի բա-
 րեկամս այս խուցիս մէջ բնակիլ: այո՛,
 այո՛, պատասխանեց Հենրիկոսը, ծեր Պօ-
 հէմիացիին հետ կենալէս ելլել կ'ու-
 զեմ քեզի հետ բնակիլ:

Հաստ աղէկ ըսաւ ծերը, խուցս քու:

կող է, մինչեւ որ ընտանիքդ գտնեմ.
 մեծ դժբաղդու թեան մը հանդիպած
 ես դուն. անտարակոյս այս դողերը բոլ
 բեզբերդէ մը յափշտակած են. հոս
 բեղի չեն կրնար գտնել. որովհետեւ
 այն չարագործները ճանչնալով աղքա
 առ թիւնս և յան իմանու թիւներէս
 վախնալով ամենեւին դաշտս չեն գար.
 խեղճ աղայ այդ հասակիդ մէջ ընտանի
 քէդ զատուիլը մեծ դժբաղդու թիւն է.
 բայց վատահացիք, ես քու հորդ սե
 ղըն եմ. կը խոստանամ ամենեւին ձեռ
 քէ չի ձգել զքեզ և ընտանեացդ հաս
 ցունել.

Ասքը ծերը երկու հիւրերը խուցը
 հրաւիրելով առջեւնին հաց, կաթ և
 մրգեղէններ դրաւ. և կերած ատեն
 նին հայրն Մէնրասա ապապրեց և ուր
 էին անոր վրայ մէկու մը բան խօսելէն
 զգուշանալ. որպէս զի աւաղակները ա
 նոր ուր ըլլաք չի գիտնալով նորէն գող
 նալու ետեւէ չըլան. Արիտասարդը
 խօսք տուած գաւաղանն ու գամուկը
 առնելով գնաց հօտը գտնելու, որ եր
 կու ու թով շուներու պահպանու թեա
 նը յանձնած էր.

Հենրիկոսը անոր երթալը տեսնե.

լով սկըսաւ լալ և չէր ուզեր որ երթայ .
այն ատեն հովիւը անոր թախանձանք
ներէն ազատելու համար ոչխարը անոր
ձգեց , խոտամալով երբեմն երբեմն
գալ զինքը անտնել . որ ազան քիչ մը
հանդարտեցաւ .

Գառնուէին ներկայութիւնը մեծ
ուրախութիւն մը պատճառեց անոր ,
զինքը իւր բարեկամէն զատուելուն վը-
րայ մխիթարելով .

ԳԼՈՒԽ Լ .

Արեգական և ծաղկանց վրայ բանի մը խօսք :

Հովիւին երթալէն ետքը Մէնրատ
ազան գիրկը առած խնձորենիին ասկը
հաստատուած նստարանին վրայ նստե-
լով սկըսաւ հետը խօսիլ .

— Ի՞նչ նայիմ սիրելի բարեկամս , ա-
մենեւ ինչ հայրդ մայրդ շէս յիշեր :

— Այո՛ , հայր իմ մայրս հոս գրպա-
նըս է . Ռիքարտ Պահէմիացիէն ատնել-
լով ըսած է ինձի որ աւիկայ է . ահա՛ .
և գրպանէն մօրը գեղեցիկ նկարագիրը

հանեց, որ աւազակներուն խռոռչէն եւ
լած ատենը հետք առած էր. այս գեղեցիկ
պատկերը կաշիէ պղտիկ պահա-
րանի մը մէջ պահուած էր. և տղան
ամենեւին ցորեկ ատեն չէր նկատած
զանի. ուստի ուրիշ անգամ այրին մէջ
տեսածէն գեղեցիկ երեւցաւ իրեն,
գոհարեղէններն և ուրիշ ծանրագին
քարերը պայծառութեամբ կը փայլէին
որով չենրիկոս շատ զուարճացաւ.

Ղզնաւորը այս միտալը նկատելով
տեսաւ որ այս գեղեցիկ պատկերին
դէմքը տղունին հետ շատ նմանութիւն
ուներ. Տայց Ատէլայիտի տղան, ինչ
չու հոս տեղս այսքան լոյս է ըսելով,
մատով ^{այս} զակը ցուցուց և հարցուց
թէ ո՞ր ^{մարդն} ^է ^{ու} ^{մտ} ^{այս} վերի կանթեղը.
որ լուսին հետ տաքութիւն ալ կ'ար-
ձակէ՝ կ'ուզէի նայիլ անոր և աչքերս
ցաւեցան. ասիկա քարայրը եղածէն
մեծ է, և կը կարծեմ որ կը քայէ. ու
րովհետեւ հոս եկած ատենս եղած տե-
ղը չէ. հոն լեռներուն վրայ ուզեցի
բռնել զանի, բայց չի կրցայ. որովհե-
տեւ երթալով կը հեռանայ, կարծեմ
թէ ծառի մը վրայ ելուի, բռնուիլը
կարելի կ'ըլլայ. ո՞վ կ'իջեցրնէ մաքրե-

իւղ և պատրոյգ դնելու համար .
 ր է չուանը .

— Վերի տեսածդ կանթեղ չէ սիւ-
 լելի բարեկամս , արեգակն է , որ հա-
 ղարաւոր տարիներէ 'ի վեր կը կենայ ,
 առանց մաքրելու պէտք ունենալու .
 չիւղ կը դնեն և ոչ պատրոյգ , ինք-
 իրեն կը վառի .

— Օուարձալի բան , ատիկայ չեմ
 հասկընար , իսկ կը տեսնեմ մէկզմէկէ
 աղուոր շատ մը ծաղիկներ . և անապա-
 տականին բազուկներուն մէջէն սահե-
 լով գնաց պարտէզն գեղեցիկ ծաղիկ-
 ները նկատելու . ի՞նչ գեղեցիկ են , պօ-
 ռաց բուռն կիրքով մը , ո՞րչափ աղուոր
 կարուած են , շատ բարակ մկր ամեր
 և հաւասար թուղթեր պէս . այս-
 քան միակերպ շինելու համար . ինքար-
 սին բերածներն ու իմ շինածներս այս-
 չափ գեղեցիկ չէին . հարկաւ ասոնց
 վրայ շատ ժամանակ անցուցած ես . իս-
 թաղերը որ կը տեսնեմ ով է փակուցեր ,
 և սկրսաւ ու շաղրու թեամբ ծաղիկնե-
 թուն կը որ բաժակներուն մէջէն ելած
 բոլոր թելերը նկատել . որոնցմէ մէկ
 քանիները գոյնզգոյն ասաղերու պէս
 վերջաւորուած էին .

— Այս ծաղիկները մարդկային ձև
 ուսկերտներ չեն, այլ գետնէն յառաջ
 կուգան:

— Ո՛հ, ասիկայ անկարելի է, որով
 հետեւ երկիրը ձեռք չունի զանոնք շե
 նելու համար, չես ուզեր ինձի յայտ
 նել քու շինած ըլլալդ:

— Ոչ, տղաս, ես այդպէս գեղեցիկ
 ծաղիկներ շինելու չափ խելք չունիմ
 նայէ, աս ըսելով մեկունի մը պատիճը բա
 ցաւ պարունակած սերմեր: տղուն ձեռ
 քին մէջ լեցրնելով ըսաւ որ այս ամեն
 մէկ հասերը գետին ցանուելով շատ մը
 ծաղիկներ յառաջ կը բերեն, և ուրիշ
 ծաղիկներն ալ ասոր պէս են: Հեն ի
 կոս շատ ուրախու թեամբ այս գեղեցիկ
 սունկերը նկատելով կ'ըսէր. «՛րչապ
 գոհ եմ հոս ըլլալուս. աւաղակներու
 քարայրը այսչափ աղէկ չէր. իսկ ս
 վերի կանթեղը շատ սաքու թիւն կու
 սայ ինձի. և կ'ուզէր ինքզինքը արեւ
 լին շերմութենէն պատապարել:

Այն ատեն ճգնաւորը տղան առ
 նելով խնձորենիին տակը իւր նստարա
 նին վրայ նստեցուց, որուն ոտները գը
 րեթէ Հենրիկոսին գլխուն վրայ կ'իջ
 նային:

— Այս ծառը շատ աղէկ է պիտու
 ուսուցիչ է, ըսաւ պղտիկը. և ձեռքը
 երկրնցուց քանի մը տերեւ փրցունե-
 լու համար. ըստայրին մէջ՝ պառաւին
 քողքին պէս կանաչ է, և դմեղ տաքու-
 թենէն և լոյսէն կը պահպանէ. այս տե-
 րեւները ծառին փակցրնողը ո՞վ է, և
 ո՞վ շինած է սասր բունը. ի՞նչպէս հո-
 ղին մէջ կը կենայ առանց նեցուկի, և
 ամենեւեմ չի մար. հիմա կը հաւատամ
 որ այս ծաղիկները մէկ մարդու մը գործ
 չեն, որովհետեւ ամեն տեղ շատ կան,
 և շատ ժամանակ պէտք է զանոնք շի-
 նելու համար.

ԳՆՈՒՄ Բ.

Բուսոց և ծառոց վրայ քանի մը խօսք.

Ամենկով Հինրիկոսը Սէնրասին
 քով որչափ որ կեցաւ սկրսաւ շատցու-
 նել իւր նորանոր հարցմունքները. վեր-
 շապէս ճաշի ժամանակը համեւելով ծե-
 ըր խուցը մտած սեղանին վրայ հաց մը,
 փայտէ ամանի մը մէջ բիչ մը կաթ, կա-
 ռագ և մեղր դրաւ. որոնց մէջ տեղը
 նոր փրցուած խնձորով լեցուն կնիւնէ

կողով մը կար . ահա քեզի կերակուր
 Հենրիկոս , կեր , ըսաւ ծերը .

Տղան կաթին մէջ հաց բրդած ա-
 տենը , ծերը երեսը խաչակնքելով աչ-
 քերը դէպ ՚ի երկինք դարձուցած ջեր-
 մեռանդ աղօթք մը ըրաւ . ետքը տը-
 զուն քով նստելով ջուրի մէջ խաչած
 արմատեղէններ կերաւ . հաղիւ թէ քիչ
 մը քան կերած էր , գնաց ճերմակ գի-
 նիով լեցուն շիշ մը բերաւ . ուրկից
 տղուն համար պզտիկ ամանի մը մէջ
 քանի մը կաթիլ լեցրնելէն ետքը քիչ
 մըն ալ ինքը խմեց . Աղքատիկ կերա-
 կուրը հասուն սեխով մը վերջացաւ ,
 ուրկից շատ ախորժակով տղան ալ կե-
 րաւ . Շնորհակալութեան աղօթքէ մը
 ետքը Մէնրասա բոլոր եւեցածները
 գորոցի մը մէջ դնելով խուցէն դուրս
 ելաւ .

Տղան անմեկնելի կերպով երջանիկ ,
 հարցուց իւր նոր տիրոջը , թէ ուրկէց
 կը գտնէր այն պաշարները . կամ թէ
 ինքն ալ քաղաքէն կը գողնար . ոչ ,
 պզտիկ բարեկամս ամենեւին մէկէ մը
 քան չեմ առներ , այն գեղեցիկ խնձոր-
 ները որ կը տեսնես այս ծառէս կը
 ժողվեմ . գարնան մէջ խնձորենին ծա-

զիկով կը ծածկուի , և ետքը այն ծա-
 ղիկները կամաց կամաց խնձորի կը փոխ-
 ուին , որք հասուննալով կ'ուտուին .
 սղան զարմացած մնաց . ծերը ըսաւ
 այս գեղեցիկ ծառը իմ տնկած պղտիկ
 սերմէս յառաջ եկած է . որ գրեթէ
 քառասուն տարի կայ . համբերէ քիչ մը
 որ հասուն խնձոր մը գտնեմ կարեմ և
 ամեն բան ցուցունեմ . Մէնրաս գը-
 նաց իւր խուցը խնձոր մը վնարուելու
 համար . զանի կարելով մէջի կուտերը
 հանած ցուցուց սղուն թէ ինչպէս
 տնկած էր ծառը , և հարցուց հասկը-
 ցա՛ր .

— Այո՛ , այո՛ .

— Այս կերպով ամեն սերմ ասոր
 նման ծառեր կրնան ըլլալ .

— Բայց այս բլուրի վրայի գեղին
 բաները ի՞նչ են , որ իրենց ցողունին
 վրայ կ'երերան . աւազակներուն քա-
 ըայրը տեսած յարդերէս կը կարծեմ .

— Ասոնք ցորենի հասկեր են , ուր-
 կէց հաց կը շինուի . այս հասկերը գար-
 նան ատենը ցանուելով կ'արմատանան .
 ետքը մեծնալով ուրիշ եռեսուն կամ
 քառասուն ոստեր կը ծնանին . այն ա-
 տեն ծերը սովբեցուց սղուն հաց չի .

Կերու ճամբան • զանի իւր արար տա-
րաւ , ուր Հենրիկոս համարձակ կր-
ցաւ հասկերը դիտել •

— Այս փոքրիկ դաշար ես եմ վա-
րած • որովհետեւ առաջուան բուսած
փուշերն ու մորենիները հանելով տե-
ղը ցորեն ցանեցի հացս հողալու հա-
մար • միւս հոս տեսած ամեն տուն
կերդ ալ միենայն են • Այս հասկերը
որ չեա կրնար համրել այս մեծամեծ
ծառերը որ մեզի պատու կուտան , յա-
ռաջ կը բերեն նաեւ փայտ՝ ձմեռը տաք-
եացու ե կերակուր եփելու համար •
Այս այգիները որ կը տեսնուամեզի խա-
ղող կուտան , ուրկէց կը շինուի գինի •
Ճաղիկներն ու խոտերը որ առանց ու-
շադրու թեան կը կոխկրուտես , ճաշի ա-
տեն կերած արմատներս են , սեխը՝ ու-
րով այնչափ ուրախացար , կնիւնէ կու-
ղովը՝ որուն մէջ խնձոր կը դնեմ , կա-
ղամախի ծառերէ շինուած բաժակներն
ու ամաները նասարանը՝ որուն վրայ նրա-
տեցանք , ճաշած սեղաննիս , ասոնց ա-
մենն ալ կուտերէ յառաջ եկած են •
Մեզը անուշահոտ ճաղիկներու հիւ-
թերէն կ'ըլլայ , որ մեղուները ասդիէն
անդիէն կը ժողվեն • Կաթը կովէն ,

ոչխարներէն կ'ըլայ . որք խոտ կ'ուտեն ,
 ուսկից կը շնուի կարագը որ մեր կե-
